

## «Ապառիկ տեղում» արշավի իրականացման պայմաններ

### 1. Ներածություն

1.1. Մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում «Ակբա բանկ» ԲԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:

1.2. Կազմակերպչի հետ «Ապառիկ տեղում» պրոդուկտի շրջանակներում համագործակցող և Կազմակերպչի կողմից սահմանված խմբում ընդգրկված կազմակերպությունների /այսուհետ՝ Կազմակերպություն/ աշխատակիցների համար Կազմակերպչի կողմից իրականացվում է մրցույթ /այսուհետ՝ Մրցույթ/:

1.3. Մասնակցելով Մրցույթին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4. Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

### 2. Ընդհանուր դրույթներ

2.1. Իրականացվող Մրցույթի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը Կազմակերպության աշխատակիցներին տրամադրվում է Կազմակերպչի կողմից՝ յուրաքանչյուր Կազմակերպության էլեկտրոնային հասցեին համապատասխան տեղեկատվության ուղարկման միջոցով:

2.2. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կուղարկվի Մրցույթի 2.1 կետում նշված էլեկտրոնային հասցեին:

2.3. Մրցույթի շրջանակներում Պարգևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

### 3. Մասնակցության պայմանները

3.1. Մրցույթի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 18-ից մինչև 2023թ. հունվարի 15-ը ներառյալ Կազմակերպության աշխատակիցներն ըստ իրենց կողմից Կազմակերպչին ուղարկված և տրամադրված «Ապառիկ տեղում» ֆակտորինգի հայտերի (այսուհետ՝ Հայտ) պորտֆելի՝ կստանան գումարային պարգև համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

Դրամական պարզևատրումների չափ (առանց հարկերի)				
ՀՀ դրամ				
1-ին մրցանակակիր	2-րդ մրցանակակիր	3-րդ մրցանակակիր	4-րդ մրցանակակիր	5-րդ մրցանակակիր
400,000	300,000	250,000	200,000	150,000

3.2. 3.1 կետում նշված դրամական պարզևատրումները տրամադրվելու են Հաղթողներին՝ վերջիններիս համար սույն Մրցույթի շրջանակներում պատվիրված դրամային Mastercard Gold քարտատեսակով՝ առանց առաջին տարվա սպասարկման միջնորդավճարի գանձման: Այն դեպքում, երբ Հաղթողը Կազմակերպչի մոտ կունենա գործող բանկային հաշիվ, ապա ըստ Հաղթողի ցանկության պարզևատրումը կտրամադրվի տվյալ հաշվի միջոցով:

3.3. Կազմակերպությունների աշխատակիցների կողմից Բանկ ուղարկված Հայտերի ծավալը որոշվում է համաձայն «Ապառիկ տեղում» վեբ կայքի օգտագործողի վերաբերյալ տվյալի:

Առավելագույն պորտֆել հաշվարկելիս հիմք են ընդունվում այն Հայտերը, որոնք մրցույթի համար սահմանված ժամանակահատվածում ուղարկվել են Բանկ և «Ապառիկ տեղում ֆակտորինգի տրամադրման և սպասարկման ընթացակարգով» սահմանված գործողությունների իրականացումից հետո ստացել են «Տրամադրված» կարգավիճակ:

3.4. Յուրաքանչյուր Կազմակերպությունում կարող է հաղթող ճանաչվել միայն 1 աշխատակից:

3.5. Սույն պայմանների 3.1 կետում սահմանված պարզևատրումները հնարավոր է օգտագործել 2023թ. մարտի 15-ից ապրիլի 28-ն ընկած ժամանակահատվածում: Նշված ժամանակահատվածում Բանկ չդիմելու դեպքում պարզևատրումը չի տրամադրվի:

3.6. Կազմակերպիչն իրավունք ունի Մրցույթի ամփոփման արդյունքում չպարզևատրել զեղծարարություն (կեղծ հայտերի սխեմա, այլ խարդախություն) իրականացրած Կազմակերպության աշխատակցին:

3.7. Մրցույթի պայմանների ամփոփումը կիրականացվի մինչև 2023թ. մարտի 10-ը (ներառյալ):

3.8. Մրցույթում հաղթող ճանաչվելու վերաբերյալ Կազմակերպության աշխատակիցը կտեղեկացվի Կազմակերպչի աշխատակցի միջոցով: